ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Հասարակության կողմից Հանրային ռադիոյի նոր կերպարի ձևավորման պահանջի ուսումնասիրություն

Երևան 2018

Հետազոտության մեթոդաբանության նկարագրություն

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը» իրականացրել է «Հասարակության կողմից Հանրային ռադիոյի նոր կերպարի ձևավորման պահանջի ուսումնասիրություն» հետազոտությունը՝ նպատակ ունենալով պարզել հասարակության ակնկալիքները Հանրային ռադիոյից երկրում տեղի ունեցող ներքաղաքական փոփոխությունների համատեքստում: Հետազոտությունն իրականացվել է քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդով կիսաձևայնացված հարցաթերթով Հայաստանի ողջ տարածքում: Ընտրանքի ծավալը կազմել է 1556 ռադիո լսող հարցվող:

Հետազոտության մասնակիցների սեռատարիքային բնութագրիչները ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Հետազոտության ընթացքում դուրս են բերվել՝

- Հանրային ռադիոյի լսելիությունը այլ ռադիոալիքների հետ համեմատությամբ,
- Հանրային ռադիո չլսելու պատճառները
- Հանրության ակնկալիքները Հանրային ռադիոյից որպես պետական լրատվամիջոց
- Հանրային ռադիոյի ունկնդիրների առաջարկներն ու սպասումները:

Վերլուծություն

Ինչպես հայտնի է, Հանրային ռադիոն ունի պետական ֆինանսավորում: Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքում նշվում է, որ յուրաքանչյուր տարի Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը կազմում է հաջորդ տարվա՝ Հանրային հեռուստառադիոընկերության ծախսերի նախահաշիվը (բյուջեն)՝ առանձին տողով նշելով Խորհրդին, Հանրային հեռուստաընկերությանը և Հանրային ռադիոընկերությանը հատկացվելիք գումարները և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն, վերջինս էլ դրանք ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը[1]:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը և այն որ Հանրային ռադիոն՝ որպես պետական լրատվամիջոց պետք է իր գործունեությամբ ապահովի թեմատիկ բազմազանություն և ծառայի հասարակության շահերին, ուստի հասարակությունն էլ իր հերթին իրավունք ունի լինել պահանջատեր հեռարձակվող հաղորդումների, եթերացանկի և իրականացվող քաղաքականության նկատմամբ: Չնայած սրան ռադիո լսող հարցվածների 59%-ը տեղյակ չէ, որ Հանրային ռադիոն ֆինանսավորվում է պետական բյուջեից: Ասենք նաև, որ հասարակության մեծամասնությունը, տեղյակ չլինելով, որ Հանրային ռադիոն ֆինանսավորվում է իրենց իսկ վճարած հարկերից, գտնում է, որ այն պետք է ծառայի բացառապես հասարակության շահերին՝ հաճախ նաև չպատկերացնելով Հանրային ռադիոյի գործառույթների և հասարակական, պետական շահերի էությունը:

Մինչ անդրադառնալը Հանրային ռադիոյից հասարակության ակնկալիքներին, քննարկենք ընդհանուր առմամբ ռադիոյի լսելիության տվյալները: Ի տարբերություն այլ լրատվամիջոցների ռադիոն՝ որպես տեղեկատվության աղբյուր երրորդ տեղում է հեռուստատեսությունից և ինտերնետային մամուլից հետո: Ռադիո լսում է հարցվածների ընդամենը 46%-ը:

Խոսելով Հանրային ռադիոյի լսելիության մասին՝ նշենք, որ տարբեր ռադիոալիքների շարքում Հանրային ռադիոն լսելիությամբ երրորդ տեղում է: Եթե ընդհանուր առմամբ ռադիո լսում է հարցվածների 46%-ը, ապա Հանրային ռադիո լսում է հարցված ռադիոլսողների 10%-ը (Գծապատկեր 2):

[1] ՀՀ օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին, հոդված 33

Գծապատկեր 2

Նշենք նաև, որ 2017թ.-ի համեմատությամբ նվազել է Հանրային ռադիոյի լսելիությունը: Եթե 2017թ.-ին մարդիկ ամենաշատը լսում էին Ռադիո Ջան, երկրորդ տեղում՝ Հանրային ռադիո և երրորդ տեղում, շատ փոքր տարբերությամբ, Ազատություն, ապա 2018թ.-ին լսելիությամբ երկրորդ տեղում Ազատություն ռադիոկայանն է: Հանրային ռադիոյի լսելիության կտրուկ անկումը պայմանավորված է երկրում տեղի ունեցող՝ հետազոտությանը նախորդած ներքաղաքական իրադարձություններով, որոնց շրջանում, հասարակության համար առավել օպերատիվ լրատվամիջոց է եղել Ազատություն ռադիոկայանը նույնիսկ այն պարագայում, երբ չունի հեռարձակման սեփական հաճախականությունը:

Անդրադառնալով Հանրային ռադիո չլսելու հիմնական պատճառներին՝ նշենք, որ հարցված ռադիոլսողների 18%-ը դժվարացել է նշել, թե ինչու չի լսում Հանրային ռադիո: Հարցվածները հաճախ են նշել, որ Հանրային ռադիոն իրենց համար հետաքրքիր չէ. այս պատասխանը նշվել է պատասխանած դեպքերի 22%-ում: Մեծ է նաև այն հարցվողների թիվը, ովքեր որպես Հանրային ռադիո չլսելու պատճառ նշում են, որ Հանրային ռադիոյով երաժշտությունը քիչ է՝ 17%. տվյալը խոսում է այն մասին, որ ռադիոլսողների մի խումբ ռադիո լսելը նույնացնում է երաժշտություն լսելու հետ: Ռադիոյի ունկնդիրները հաճախ նշել են, որ Հանրային ռադիոն տխուր ռադիոալիք է, պակասում է դինամիկան, միապաղաղ է, երաժշտություն գրեթե չկա: Օրինակ՝ Հանրային ռադիոյին ուղղված առաջարկություններում հարցվածներից մի քանիսը նշել են.

Կցանկանայի, որ ավելի հաճախ լինեն երաժշտական և հումորային հաղորդումները:

35տ., իգական, Տավուշի մարզ

Փոփոխեք եթերները, ավելի հաճելի կլինի, որ երաժշտություն շատ ինչի:

26տ., իգական, Երևան

Ունենան լավ, ուրախ եթեր, որ ժողովուրդն էլ եթերից հետո ուրախ և հպարտ լինի:

59տ., արական, Արմավիրի մարզ

Հանրային ռադիո չլսելու հիմնական պատճառների մեջ նշվել են նաև այնպիսի պատասխաններ, ինչպիսիք են՝ Հանրային ռադիոն վստահելի չէ, օբյեկտիվ չէ, իշխանամետ է, տխուր է և այլն:

Հարցի վերաբերյալ քանակական տվյալները ներկայացված են Գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3

Խոսելով Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ՝ հարցվածներից փորձել ենք պարզել, թե ինչպիսի Հանրային ռադիո կցանկանային ունենալ «նոր» Հայաստանում: Նշենք, որ հարցվածների 3%-ը դժվարացել է

պատասխանել, թե ինչպիսի Հանրային ռադիո է ուզում ունենալ «նոր» Հայաստանում: Հարցվածները հաճախ նշում են, որ Հանրային ռադիոն՝ որպես պետական կառույց, իր հիմնական ուղղվածության շեշտը պետք է դնի հասարակության կրթման, օգտակար տեղեկատվության տրամադրման, ազգային արժեքների տարածման վրա: Ընդ որում, կրթելու գործառույթը պետք է իրականացվի ոչ թե առանձին հաղորդումների միջոցով, այլ պետք է ընդունվի որպես հաղորդացանցի կառուցման գաղափարախոսության հիմք: Հարցվողները հաճախ առաջարկություններ են արել, թե ինչպիսի հաղորդումներ կցանկանային լսել Հանրային ռադիոյով.

Հայ մեծերի, համաշխարհային գիտնականների,

գրողների մասին ավելի շատ հաղորդումներ լինեն:

52տ., իգական, Երևան

Հայ գրողներին վերաբերվող հաղորդումներ ավելացնեն,

բեմականացվեն և ներկայացվեն նրանց ստեղծագործությունները,

որպեսզի ավելի իրազեկված լինի հայ ժողովուրդը, հատկապես երիտասարդությունը:

28տ., իգական, Երևան

Հանրային ռադիոյի եթերացանկի պարզ վերլուծությամբ կարող ենք տեսնել, որ եթերացանկում մեծ տեղ են զբաղեցնում կրթական-ճանաչողական հաղորդումները, սակայն դրանք հասարակության համար ընկալելի չեն. այդ հաղորդումները և՛ բովանդակային, և՛ ներկայացման առումներով գրեթե նույնական են. Հանրային ռադիո ունկնդրելիս տպավորություն է ստեղծվում, որ անընդհատ լսում ես նույն հաղորդումը, նույն ձայնը, որը խոսում, պատմում է տարբեր թեմաներ, այսինքն՝ նկատվում է դինամիկայի պակաս, որը կորցնում է հետաքրքրությունը ռադիոյի նկատմամբ անկախ հաղորդման թեմայի հետաքրքրությունից:

Խոսելով Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունների մասին՝ հարցվողները առանձնացրել են այն հիմնական հատկանիշները, որոնք պետք է ունենա Հանրային ռադիոն «նոր» Հայաստանում: Հարցի վերաբերյալ քանակական տվյալները ներկայացված են Գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4

Ինչպես տեսնում ենք, հասարակության շրջանում Հանրային ռադիոյից հիմնական սպասումները կապված են վերջինիս օբյեկտիվ, վստահելի, անաչառ, օպերատիվ լինելու հետ:

Հարցվածները հնարավորություն են ունեցել բաց հարցով ներկայացնել իրենց առաջարկները Հանրային ռադիոյին, օրինակ հնչել են այսպիսի առաջարկներ՝ ուղղված Հանրային ռադիոյի տնօրինությանն ու թիմին:

Հարգելի Հանրային ռադիոյի տնօրինություն, ես՝ որպես ռադիոլսող, ակնկալում եմ անաչառ, բարձրաճաշակ, ժամանակակից հաղորդումներ:

Նոր Հայաստանի շունչը պետք է արտացոլվի ձեր հեռարձակած հաղորդումներում:

Հույս եմ հայտնում նաև, որ նոր հաղորդավարական կազմը կընտրվի անաչառ:

33տ., իգական, Երևան

Հարգելի Հանրային ռադիոյի թիմ, այս քաղաքական փոփոխություններից հետո ակնկալիքներս՝ կապված ձեզ հետ, շատ մեծ են: Ցանկանում եմ այսուհետ լսել միայն նոր, հետաքրքիր հաղորդումներ՝ գրագետ և խելացի հաղորդավարների մասնակցությամբ: Երիտասարդների համար ավելի զարգացնող և ժամանակակից հաղորդումներ:

24տ., իգական, Լոռու մարզ

Հարցվածները կարծում են, որ այլ ռադիոալիքների հետ համեմատությամբ Հանրային ռադիոն պետք է լինի ամենահետաքրքիրը (30%):

Հանրային ռադիոն պետք է լինի պաշտոնական, բայց միևնույն ժամանակ ընկերական և մտերմիկ: Հարցման մասնակիցները նշում են, որ Հանրային ռադիոն ժամանակակից դառնալու խնդիր ունի: Հարցվածների մի խումբ կարծում է, որ Հանրային ռադիոն ավանդական է, մեկ այլ խումբ՝ ժամանակակից: Ավանդական և ժամանակակից կատեգորիաները այս դեպքում չունեն դրական կամ բացասական երանգավորում, այսինքն՝ հարցվածների կարծիքով Հանրային ռադիոն պահպանում է ավանդականը, սակայն միևնույն ժամանակ նորովի ներկայացման կարիք ունի: